Ռ. Հ. ԴԵՎԵՋՅԱՆ

ՏԱՇԻՐ-ԶՈՐԱԳԵՏԻ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՈՍԿԵ ԵՎ ԱՐԾԱԹԵ ԻՐԵՐ

Հայաստանը հարուստ է բրոնզեդարյան հուշարձաններով, որոնք պատմում են մեր երկրի նախաբնիկների կյանքի, կենցաղի, հավատալիքների, սովորույթների, արհեստների ու արվեստների մասին, թե ինչպիսի ճաշակ ու ձեռքի վարպետություն են ունեցել մեր հինավուրց նախնիները։

Բրոնզեդարյան հարուստ դամբարաններով Հայաստանում աչքի են ընկնում Լճաշենի գերեզմանաթմբերը, Տոլորսի (Զանգեզուր) դամբարանները, Կիրովականի և Ալավերդու շրջանների հարուստ դամբարանադաշտերը, որոնք պարունակում են ոչ միայն գեղարվեստական խեցեղենի ու բրոնզե իրերի բազմազան նմուշներ, այլև ոսկերչական արվեստի հիանալի առարկաներ։ Ոսկե իրերը Հայկական լեռնաշխարհում երևան են գալիս դեռևս էնեոլիթյան ժամանակաշրջանից, հանձինս Խաչենադետի և Շենգավիթի նյութերի։ Ոսկե հարուստ առարկաներ հայտնի են նաև Հյուսիսային Կովկասի, Մայկոպի և Նովոսվոբոդնոկի հայտնի դամբարանաբլուրներից, որոնց մշակույթը մի շարք գիտնականների կարծիքով ստեղծվել է հարավից եկող ազդեցության տակ[1]։

Ուշադրության արժանի են այն ոսկե և արծաթե իրերը, որոնք հայտնաբերվել են Տաշիր-Զորագետում և 1930-ական թվականներին մուտք գործել Հայաստանի պետական պատմական թանգարան[2]։ Սրանք պատահական գյուտեր են, առանց որևէ փաստական հիմնավորման։

Ելնելով ոսկերչական արհեստագործության եղանակներից և նկատի ունենալով բրոնզեդարյան ժամանակաշրջանի մետաղամշակության մակարդակը, կարելի է որոշակի դիտողություններ անել վերոհիշյալ իրերի պատրաստման բազմազան եղանակների մասին։ Այստեղ մենք տեսնում ենք հատիկավոր զարդեր, կոփման, դրվագման, սեղմման, ձուլման, հղկման, մածուցման ու երեսապատման եղանակով պատրաստված իրեր։

Ա. Լուկասը, մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկելով հին Եգիպտոսում ոսկու մշակումը, գտնում է, որ ժամանակակից ոսկու մշակման համարյա ոչ մի ձև անհայտ չի եղել եգիպտական վարպետներին։ Ըստ որում, այդ միջոցներից շատերն օգտագործվել են շատ ավելի վաղ ժամանակներից[3]։ Թվում է, սխալված չենք լինի, եթե նույն բանն ասենք նաև բրոնզեդարյան Հայաստանի վերաբերյալ՝ նկատի ունենալով մեր արհեստագործական ձևերի

---

1 ОАК, 1902 г., էջ 37, նկ. 94 և 98։ А. А. Иессен, К хронологии «больших кубанских курганов», СА, XII, 1950 г. В. М. Массон, Средняя Азия и Древний Восток, М—Л., 1964, էջ 237։

2 Այս զարդերի մեծ մասը Կիրովականի Դիմաց թաղամասում պատահարար բացված հարուստ դամբարանի նյութերն են։

3 А. Лукас, Материалы и ремесленные производства Древнего Египта, Москва, 1958, էջ 360։

բազմազանությունը, նրանց պահպանումն ու զարգացումը Հայաստանի նյութական մշակույթի ուշ շրջաններում։

Բրոնզեդարյան մշակույթի ժամանակաշրջանում տարածված է եղել հատիկավոր զարդատեսակը, որը մեր տրամադրության տակ եղած իրերում ներկայանում է հիմնականում արծաթի վրա։ Դրանք Կիրովականի Դիմաց կոչվող թաղամասի դամբարանից հայտնաբերված արծաթաշար մանյակի առանձին մասերն են (ընդամենը 10 հատ), կամ առանձին կախիկներ են, որոնք դասավորված են եղել քարե ուլունքների արանքում (աղ. I, նկ. 6)։ Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է 1,4 սմ տրամագիծ և 1 մմ հաստություն ունեցող մի շրջանակ, որի տրամագծով անցնում է նույնպիսի մի ժապավեն, իսկ հակառակ կողմից նրան ուղղահայաց մածուցված է խողովակիկը, տափակ թիթեղից, ձվաձև կտրվածքով, որը ծառայել է թելը միջից անցկացնելու նպատակին։ Շրջանակի, ժապավենի և խողովակի երեսի կողմից մածուցված են 24—25 գնդիկներ։ Այդ զարդերից մեկը միայն ավելի բարակ թիթեղից է և մի քիչ ավելի մեծ, շրջանակի միջից անցնող ժապավենները երկուսն են, որոնք խաչաձևվում են։ Այս զարդերը շատ նման են Ժ. դը Մորդանի կողմից Մուսիյերիի (Ալավերդու շրջան) մ. թ. ա. VIII—VI դ. դամբարանադաշտում հայտնաբերված կապարե կախիչներին, որոնք սակայն իրենց վրա հատիկներ չունեն[4], ինչպես նաև Ուրի թագավորական դամբարանից հայտնաբերված ոսկե կախիկին[5]։ Նման զարդ շատ հավանական է, որ եղել է նաև ոսկուց, քանի որ միևնույն դամբարանից գտնվել է նրա խողովակաձև մասը ոսկուց՝ վրան պահպանված երկու հատիկներով։

Հատիկավոր զարդի բնորոշ օրինակ են հանդիսանում նաև նույն դամբարանից հայտնաբերված գլանաձև ուլունքները, որոնք ամբողջությամբ պատրաստված են արծաթե հատիկներից (աղ. I, նկ. 16)։ Նույն ուլունքների ոսկին ևս հատիկավոր զարդով ոսկե կոճակներ հայտնաբերվել են 1956 թ. Լճաշենի մ. թ. ա. VIII դարի № 1 և 2 գերեզմանաթմբերից[6]։ Նույն ուլունքի բրոնզը հայտնաբերվել է Արթիկի № 9 դամբարանից[7], որը կարելի է վերագրել XII—XI դարերին։

Հատիկավոր եղանակով է արված նաև Կիրովականի Դիմաց թաղի № 1ձ դամբարանի ոսկե մատանին (աղ. I, նկ. 4, և աղ. II, նկ. դ)։ Սա պատրաստված է կլոր կտրվածքով ոսկե լարից, որի ծայրերն իրար վրա են բարձրանում 2 մմ չափով։ Մատանու վրա կան 5 ոսկյա հատիկներ, առաջինը մածուցված է օղակին, որի վրա նստում են 3 իրար կողքի մածուցված հատիկները, իսկ սրանց վրա՝ հինգերորդը։ Սա ոսկերչական նուրբ աշխատանք է, ժամանակակից վարպետությանն ու ճաշակին համապատասխան։ Այս մատանին իր կառուցվածքով հիշեցնում է Բեշտաշենի դամբարանադաշտում (VI դարի սկիզբ մ. թ. ա.) հայտնաբերված արծաթե ականջի օղը, որից կախված է հինգ գընդիկներից կազմված ողկույզը[8]։

---

[4] J. de Morgan, Mission scientifique au Caucase, Paris, 1839, էջ 106, նկ. 63։

[5] Г. Чайлд, Древнейший восток в свете новых раскопок, М., 1956, тб. XXVI в.

[5] А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956, СА; 1957, II, էջ 148, նկ. 4, էջ 151, նկ. 11։

[7] Т. С. Хачатрян, Материальная культура Древнего Артика, Ереван, 1963, էջ 83, тб. 7.

[8] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, I, Тбилиси, 1941, էջ 43, նկ. 40։

Հատիկավոր ոճը մեծ տարածում է գտել ոչ միայն բրոնզեդարյան ժամանակաշրջանում (Լճաշեն, Կիրովական, Արթիկ), այլև ավելի ուշ, ուրարտական զարդարվեստում (Կարմիր բլուր)[9], վաղ հայկական շրջանում (Ջրառատ[10], Գառնի[11]), միջնադարում (Դվին)[12], Վրաստանի հնագիտական նյութերում բազմաթիվ են հատիկավոր զարդատեսակի նմուշները[13]։

Այս զարդաձևին կարելի է հանդիպել նաև հին փյունիկյան ոսկերչական արվեստում[14], Սուզում (Էլամ, XIII—XII դդ.)[15], Շումերում (Ուր, 3-րդ հազարամյակի սկիզբ)[16], Կիպրոսում[17], Սարդինիայում[18], լիդիական[19] և եգիպտական[20] ոսկերչական արվեստում։ Այս զարդարվեստը լայն տարածում ունի նաև մեր օրերում։

Խոսելով վերոհիշյալ զարդերի մասին, մի փոքր անդրադառնանք նրանց պատրաստման եղանակին։

Առաջին իրը արծաթե կախիկ ականքն է, որի կլոր շրջադիծը պատրաստված է արծաթե տափակ լարից, կլոր լարը մուրճով ծեծելու միջոցով։ Իսկ կլոր կտրվածքով լարն իր հերթին ստացվել է ակոսավոր քարի մեջ ձուլված արծաթը մուրճի հարվածներով հավասարապես կլորացնելու շնորհիվ։ Պետք է նշել, որ կլոր կտրվածքով լարը բոլոր դեպքերում էլ ստացվել է նույն եղանակով, ուստի ավելորդ ենք համարում մյուս դեպքերում ևս անդրադառնալ դրան։ Նուրբ զարդեր, մեդալիոններ և ասեղներ ձուլելու քարե կաղապար է հայտնաբերվել Մուխաննաթ թափայի վերին շերտում, որը թեև ավելի ուշ ժամանակաշրջանի է, սակայն զարդարանքի առարկաների ձուլման ակնառու ապացույց է հանդիսանում[21]։ Նախաուրարտական ժամանակաշրջանի մի քանի քարե կաղապարներ են հայտնաբերվել Դվինում, որոնք օգտագործվել են շատ նուրբ զարդեր ձուլելու համար։

Ինչպե՞ս են պատրաստվել այն հավասարաչափ, փոքրիկ արծաթե գնդիկները, որոնք հետո մածուցվել են զարդին։ Նույն կլոր արծաթալարը ծեծելով հասցրել են որոշ բարակության, որից հետո այն պահել թեժ կրակից որոշ հե-

---

[9] Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Ленинград, 1962, էջ 87, նկ. 52, էջ 88, նկ. 53։

[10] А. Мнацаканян, Г. Тирацян, Новые данные о материальной культуре Древней Армении, ԳԱ «Տեղեկագիր», 1961, 8, էջ 72, тб. 2.

[11] Б. Н. Аракелян, Гарни, I, Результаты раскопок 1949—1950 гг., Ереван, 1957, էջ 79, նկ. 46 և 48։ Гарни, I, Результаты раскопок 1949—1950 гг., էջ 43, նկ. 30, էջ 48, նկ. 36։

[12] Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 173, նկ. 151, էջ 175, նկ. 152։

[13] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, I, Тбилиси, 1941, էջ 43, նկ. 40 (1), էջ 134, նկ. 130, էջ 135, նկ. 132։

[14] E. Babelon, Manuei d'Archeologie Orientale, 1888, էջ 309, նկ. 230։

[15] E. Porada, The art of ancient Iran, New York, 1965, էջ 63, նկ. 12։

[16] Г. Чайлд, Նշվ. աշխ., Таблица. XXVI a.

[17] Perrot et Chipiez, L'histoire de l'Art, Phénice — Cypre, tome III, 1885, էջ 817, նկ. 570, 571, էջ 823, նկ. 584։

[18] Նույն տեղում, էջ 821, նկ. 577, 579։

[19] Նույն տեղում, Phrygie. Lydie et Carie, Lycie, tome I, 1890, էջ 295, նկ. 203, էջ 297, նկ. 205, 206, էջ 298, նկ. 207։

[20] А. Лукас, Նշվ. աշխ., էջ 359։

[21] Ե. Բայբուրթյան, Աշխատանքի գործիքները Հին Հայաստանում, ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք 1, Երևան, 1938, էջ 228, նկ. 131։

ռավորության վրա և հատուկ խողովակից օդ փչել կրակի բոցին, ուղղելով այն մետաղալարի վրա։ Այս գործողության ժամանակ, լարից պոկված անհավասարաչափ գնդիկներն ընկել են տակը դրված ջրով լի ամանի մեջ, որոնք հետո մաղելով ստացել են հավասար գնդիկներ[22]։

Կոփելու միջոցով են պատրաստված արծաթե երկու կախիկ զարդերը, որոնք հայտնաբերվել են Կիրովականի Դիմացի դամբարանից։ Առաջինը պայտաձև զարդն է (աղ. I, նկ. 3), 1,2—2 մմ հաստությամբ, կախելու ունկով։ Սա պատրաստված է կլոր կտրվածքով պայտաձև արծաթալարից, որը ծեծելով տափակացրել են, ապա հղկել, բոլոր կողմերը հավասարացնելու համար։ Երկրորդը, արծաթե շրջանաձև զարդն է (աղ. I, նկ. 1), 1 մմ հաստությամբ, որի հաղիվ քառորդն է պահպանվել։ Սրա շրջանակը նույնպես կոփելով տափակացված լար է, որի մեջ, նույն տիպի լարից, բայց ավելի բարակով, պատրաստված են վարդյակներ։ Այս զարդի համարյա կրկնօրինակն է հանդիսանում Ուրի թագավորական դամբարանից հայտնաբերված ոսկե կախիկը[23]։ Կոփածո է նաև արծաթե փոքրիկ օղակը, իրարից հեռացված ծայրերով, որն ունի կլոր կտրվածք։ Նույն դամբարանից է հայտնաբերվել 57,5 գրամ կշռող, ձվաձև կտրվածքով արծաթե կուռ և ողորկ ապարանջանը, որը կոփածո է և չափազանց վարպետորեն հղկված։

Հաճախ են հանդիպում դրվագումով զարդարված իրեր, որոնք շատ գեղեցիկ և նուրբ են, կատարված բարձր ճաշակով։ Դրվագումը կատարված է տարբեր մեծության գործիքների միջոցով, որոնք ունեցել են բութ, տափակ, կիսակլոր աշխատանքային ծայրեր։ Կիրառվել է դրվագման ներսի և դրսի եղանակները։

Այս խմբից, առավել աչքի են ընկնում մականի 5 ոսկե գլուխները (մեկը խիստ թերի և վնասված), որոնք հայտնաբերվել են Կիրովականի Դիմացի վերոհիշյալ դամբարանից (աղ. I, նկ. 5, և աղ. II, նկ. ա)։ Սրանք բոլորն էլ համարյա նույն չափի, ոճավորված, կենդանակերպ զարդեր են, պատրաստված ոսկու շատ բարակ թիթեղից, սնամեջ։ Այս իրերից յուրաքանչյուրը կազմում է հակառակ ուղղությամբ նայող և ոչխարի նմանություն ունեցող ինչ որ կենդանու 2 գլուխներ։ Կենդանիների աչքերն ու դունչը լավ են արտահայտված, վզի հիմքում ունեն ցցուն գոտիներ, որոնք թվում են թե կապեր են։ Իրի վերևի մասում անցնում է թեք գծերից կազմված, երկու գլուխները միացնող գոտի, որը թողնում է մազի տպավորություն։ Իրը տակի մասում ունի ուղղանկյուն անցք՝ փայտի վրա հագցվելու համար և երկու կողմից 2-ական անցքեր, գամով ամրացնելու համար։ Այս իրը պատրաստվել է երկու կտորից։ Մեկ կտորը պատրաստելու համար վերցրել են ոսկու, ծեծելով բարակացված, սկավառակաձև թիթեղը դրել ձյութանման զանգվածի վրա, վրան գծել իրի ընդհանուր ուրվագիծը, ապա շատ թեթևակի հարվածելով այն փոխանցել հակառակ կողմի վրա։ Որից հետո թիթեղը շուռ են տվել և ներսի կողմից դրվագման միջոցով նրան տվել ցանկացած չափն ու ձևը, այնուհետև երեսի կողմից դրվագել փորագրված մանրամասները։ Ավելորդ մասերը դանականման սուր գործիքով կտրելուց հետո, արդեն պատրաստ երկու կտորները մածուցել են իրար, ապա հղկել անհարթությունները, որից հետո միայն կտրել անցքերը։

22 Հ. Ն. Տեր-Ղևոնդյան, Հայկական աշխարհիկ զարդերը XIX դարում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 11, 1965։

23 Г. Чайлд, նշվ. աշխ.։ Таблица XXVI в.

Դրսից դրվագելու միջոցով է արված նաև ոսկե 2,3 սմ երկարություն և լայն մասում 1 սմ լայնություն ունեցող սնամեջ խողովակիկը, որը հավանաբար ծառայել է մականի հակառակ ծայրը զարդարելու համար և հագցված է եղել փայտին (աղ. I, նկ. 12 և աղ. II, նկ. գ)։ Նման խողովակիկ, կարմրավուն ոսկուց 2,7 սմ երկարությամբ, հայտնաբերվել է 1894 թ. Ռեսլերի կողմից Լեռնային Ղարաբաղի Խաչենագետի № 2 դամբարանից[24]։

Այդ խողովակիկն իր վրա ունի բարձրադիր կետային և իրար մոտեցող ու հեռացող գծային զարդեր, որը Կուշնարյովան համարում է մամլված և թվագրում է 2-րդ հազարամյակի սկզբով[25]։ Ելնելով այս իրի նկարից, թվում է, որ այն ոչ թե մամլված է, այլ պարզապես դրվագված ներսի կողմից, մանավանդ, որ զարդերը շատ պարզ են և մամուլը պատրաստելու դժվար աշխատանքը՝ քիչ արդյունավետ։ Ուշագրավ է, որ բրոնզե խողովակիկները լայնորեն տարածված են Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան և երկաթի ժամանակաշրջանի հուշարձաններում։

Պատրաստման այլ եղանակ ունի Արավերդու շրջանի Ուզունլար գյուղից 1938 թ. հուլիսին պատահաբար հայտնաբերված 1,5 գ կշռով ոսկե մեդալիոնը, որի մակերեսը զարդարում են կետային և շրջանաձև բարձրադիր զարդեր (աղ. I, նկ. 2 և աղ. II, նկ. բ)։ Սա պատրաստված է եղել երկթերթ նուրբ թիթեղից (մնացել է միայն երեսի թիթեղը), հակառակ կողմից այն դրվագել են բութ գործիքի միջոցով, ապա երկու թերթերի մեջտեղը լցնելով մածուցիկ նյութ, փակել։ Ստացվել է կուռ ոսկու տպավորություն թողնող նուրբ և թեթև զարդ։ Այս իրի հետ միասին հայտնաբերվել է նաև նույն զարդանկարը կրող արծաթե թիթեղ, որ հրատարակել է Կուֆտինը, համեմատելով Թրիալեթիի № 16 դամբարանից հայտնաբերված ոսկե թիթեղի և Նախիջևանից գտնված բրոնզե ճարմանդը պատող ոսկե թիթեղի նախշերի հետ[26], վերագրելով այդ տիպի իրերը մ. թ. ա. XIV—XV դդ.։ Այս զարդը, իր նախշերով, պատրաստման ձևով, նույնիսկ մեծությամբ, խիստ նմանվում է վերջերս Նոյեմբերյանի շրջանի Ջուջևան գյուղի դամբարաններից հայտնաբերված բրոնզե սկավառակին։ Այն իր զարդերով և նրբությամբ հիշեցնում է նաև Թրիալեթիի 17-րդ կուրգանից հայտնաբերված ոսկե սկավառակը[27], որի տրամագիծը 2 սմ-ով մեծ է Ուզունլարի (Օձուն) մեդալիոնի տրամագծից։

Հետաքրքրական է նաև Դիմացի դամբարանից հայտնաբերված նշաձև ուլունքը, որը խիստ քայքայված լինելով հանդերձ, պահպանել է վրայի նուրբ գծազարդերը, որոնք կատարվել են դեռ ուլունքը չձևավորած՝ տափակ թիթեղի վրա, ներսի կողմից դրվագման միջոցով (աղ. I, նկ. 13)։ Այս իրը շատ նուրբ է, և հավանական է, որ մեջը լցված է եղել ձյութանման զանգվածով, այլապես պիտանի չէր լինի օգտագործման համար։ Այս ենթադրությունը հաստատվում է նաև Լճաշենում հայտնաբերված ոսկե ուլունքով, որի մեջ պահպանված է այդ զանգվածը։

Հակառակ վերոհիշյալ ուլունքի այլ ձևով է պատրաստված 1948 թ. Կիրովականի միջին բրոնզեդարյան հարուստ դամբարանաբլրում հայտնաբերված

---

24 ОАК за 1897, էջ 157, նկ. 314։

25 К. Х. Кушнарева Памятники медного века в Нагорном Карабахе, СА, XX, 1956, էջ 167, 175 և 176։

26 Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 99, նկ. 105 և 106։

27 Նույն տեղում, էջ 441, Таблица CIII.

ոսկե երկարավուն ուլունքը (աղ. I, նկ. 8)։ Այն պատրաստելու համար ոսկե թիթեղից խողովակը ձյութանման նյութով լցնելուց հետո, հարվածների տակ երկու ծայրերը սրել են, դարձնելով այն էլիպսաձև, որից հետո դրսից դրվագելով զարդարել։ Դրսից են դրվագված նաև Դիմացի դամբարանից հայտնաբերված գլանաձև ուլունքները։

Պետք է հիշատակել նաև սեղմումով պատրաստված ոսկե ուլունքները, որոնք հայտնաբերվել են Լենինականում, Հ. Մարտիրոսյանի կողմից՝ 1952 թ. մսի կոմբինատի մոտ գտնվող դամբարանադաշտի № 1 քարարկղում (VII—VI դդ. մ. թ. ա.) (աղ. I, նկ. 14) և Կիրովականի միջին բրոնզեդարյան հարուստ դամբարանում (աղ. I, նկ. 7 և 9)։ Այս ուլունքները չափազանց գեղեցիկ և նուրբ են, պատրաստված երկու կտորից։ Առաջինը պարուրաձև զարդերով ուլունքն է, որը պատրաստելու համար կտրել են երկու հատ նույն մեծության սկավառակներ և յուրաքանչյուրը սեղմել քարի կամ մետաղի մեջ փորված կիսագնդերի մեջ, ստացել հավասար կիսագնդեր։ Պատրաստ կիսագունդը իջեցնելով ձյութի մեջ, ներսի կողմից դրվագել են պարույրները, որից հետո երկու մասերը միացրել են իրար։ Այս եղանակով են արված նաև Կիրովականի ուլունքները, սակայն նրանց դրվագումը դրսից է։ Նույնն է նաև Դիմացից հայտնաբերված պարզ, փոքրիկ ոսկե ուլունքը (աղ. I, նկ. 10)։

Դիմացում է հայտնաբերվել նաև 2,2 սմ երկարության արծաթե շղթայի բեկորը, որի կրկնօրինակը (ոսկուց), գեղեցիկ ոսկե կախիկի և այլ զարդերի հետ միասին 1952 թ. հայտնաբերվել է Տոլորսի բրոնզեդարյան հարուստ դամբարանից[28] (աղ. I, նկ. 11)։ Դրանք մեկ բարակ լարից, իրարից չբաժանվող զույգ օղակներ են, որոնք ծալվելով իրար վրա, անցնում են հաջորդ զույգ օղակի միջից։ Այս շղթայի պատրաստման եղանակը պարզ է, սակայն մտահղացումը բարդ։ Ժամանակակից աշխարհում նույնատիպ շղթայի օգտագործման բնագավառը շատ լայն է։

Պարզ պատրաստման եղանակ ունեն 1 մմ հաստության արծաթե զսպանակաձև ուլունքները, հայտնաբերված նույն Դիմացից (աղ. I, նկ. 17)։ Այն պատրաստել են արծաթալարը փաթաթելով ձողի վրա, ապա ուժեղ տաքացրել, որպեսզի զսպանակը չբացվի։ Նույն դամբարանից են նաև ոսկե 12 փոքրիկ շրջանաձև թեփուկները, 4 մմ տրամագծով, կենտրոնում քառակուսի անցքով (աղ. I, նկ. 18)։ Սրանք գործածվել են հավանաբար հագուստը զարդարելու կամ մանյակի տարբեր ուլունքները իրարից բաժանելու համար։ Ոսկե թեփուկներ հայտնաբերվել են նաև Լճաշենի № 2 գերեզմանաթմբից[29]։ Քարե ուլունքները երկու կողմից ոսկե շրջանակների մեջ առնելու փորձը գոյություն է ունեցել հին շումերացիների մոտ դեռևս մ. թ. ա. 3-րդ հազարամյակի սկզբում[30]։ Շաղախից պատրաստված նույնատիպ զարդեր հայտնաբերվել են բազմաթիվ հնավայրերում, ինչպես, օրինակ՝ 1956 թ. Գեղարոտի (Սպիտակի շրջան) № 1 դամբարանում[31] (XIII դ. մ. թ. ա.)։ Սրանք ունեն 1 սմ տրամագիծ, 1 մմ հաստություն և պատրաստված են երկնագույն և սպիտակ շաղախից։

---

28 Л. О. Мнацаканян, Находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре) Арм. ССР, КСИИМК, 1954, вып. 54, էջ 104, նկ. 45։

29 А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г., СА, II, 1957, էջ 151, նկ. 11։

30 Г. Чайлд, У истоков Европейской цивилизации, М., 1952, էջ 74 և 76։

31 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, էջ 91, նկ. 43։

Կիրովականի միջին բրոնզեդարյան հարուստ դամբարանաբլրում կան բազմաթիվ ոսկե ժապավեններ՝ շատ բարակ թիթեղից, որոնք օգտագործվել են փայտե, բրոնզե կամ արծաթե իրերի երեսապատման նպատակով։ Նույն դամբարանում հայտնաբերվել են նաև խոշոր գլուխներով մի քանի տասնյակ բրոնզե գամեր, որոնք երեսապատված են արծաթե թիթեղներով։

Ոչ թանկարժեք նյութերից պատրաստված իրերի ոսկե երեսապատումը հայտնի էր դեռևս հին եգիպտացիներին, որոնք այդ գործը հասցրել էին մեծ կատարելության։ Նրանք կարողանում էին ստանալ ոսկու 0,17 մմ-ից 0,0051 մմ հաստությամբ «ներբաթիթեղներ»։ Համեմատաբար հաստերը, որոնք ընդհանրապես փորագրված կամ բարձրադիր զարդեր էին ունենում, գամում էին հանգուցյալի փայտե դագաղին, ոսկե մանրիկ գամերի միջոցով, իսկ բարակները պարզապես սոսնձում։ Նկատվել է, որ այդ նպատակի համար օգտագործել են նաև ձվի սպիտակուցը[32]։ Երեսապատումը Հայաստանում կիրառվել է նաև ուրարտական թագավորության շրջանում։ Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերվել է առյուծի արձանիկի ոսկե երեսապատը, որի միայն գլուխն ու բացված երախն են պահպանվել։ Գտնվել է նաև արծաթե մանյակի մի կտոր, որի ծայրին նստած առյուծը պատված է ոսկու թիթեղով։ Վերջապես պետք է նշել 1956 թ. հայտնաբերված արծաթե կափարիչը, որի մակերեսը զարդարված է չորս ոսկե համակենտրոն ժապավեններով։ Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին զարդարված է երկու շարք բարձրադիր ծաղկաշղթաներով[33]։ Դժբախտաբար, մեր տրամադրության տակ եղած նյութերի մեջ չեն պահպանվել ոսկով երեսապատված իրեր և հնարավոր չէ նրանց պատրաստման ձևի մասին խոսել։ Ինչ վերաբերվում է մեր ոսկե «ներբաթիթեղի» հաստությանը, ապա շատ հավանական է, որ այն լինի եգիպտականից ոչ բարակ։ Սակայն պետք է նշել, որ նախնադարյան Հայաստանի ոսկերչական արվեստը իր ձևերով ավելի մոտ էր կանգնած Միջագետքի առաջավոր ասիական ժողովուրդների ոսկերչական արվեստին, քան եգիպտականին։ Այդ միտքն արտահայտել է Հ. Ա. Մարտիրոսյանը[34], որի մասին վկայում են նաև մեր տրամադրության տակ եղած Միջագետքի իրերին նմանվող մի քանի զարդերը։

Ինչպես վերևում տեսանք, կոփված, դրվագված, սեղմումով պատրաստված իրերը ենթարկվել են հղկման՝ գոյություն ունեցող անհարթությունները վերացնելու և իրին ողորկ արտաքին տալու համար։ Հղկումը կատարվել է խարտոցի դեր կատարող որևէ քարի միջոցով, որը սև կամ կանաչավուն փորձաքար էր, ուներ հղկելու հատկություն և լայնորեն տարածված էր Սևանի ավազանում։

Ներկայացված իրերի մեջ կան այնպիսի զարդեր, որոնց պատրաստման համար օգտագործվել է մածուցումը։ Մածուցված են թե՛ ոսկին և թե՛ արծաթը։ Արծաթի մածուցման համար օգտագործել են արծաթի մածույցը, որը կլինելով ժամանակակից արծաթ մածույցի բաղադրությունից, կազմում էր 2/3 արծաթ և 1/3 պղնձային խառնուրդ։ Արծաթև հատիկավոր ուլունքը պատրաստելու համար սկզբում մածուցել են նրա լայնական կտրվածքը կազմող չորս շարք հինգական հատիկները, ապա ավելի թույլ մածույցով դրանք փակցրել

32 А. Лукас, նշվ. աշխ., էջ 360։
33 Б. Б. Пиотровский, Ванское Царство, Москва, 1959, էջ 181—183։
34 А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 105—106։

են իրար, կազմելով ուլունքի երկարությունը (որը մեր օրինակում 4 շարք է)։ Ոսկե մածուցյով են միացած մականի գլուխները, որի բաղադրությունը պետք է լիներ ոսկին և պղինձը։ Մյուս իրը ոսկե մատանին է, որի ակի գնդիկներից, նախ միացրել են մեջտեղի երեք գնդիկները, այնուհետև վերայինը, ապա տակինը, որն իր հերթին մածուցվել է մատանու օղակին։

Ինչպես տեսանք, նկարագրված ոսկե և արծաթե զարդերի մեծ մասը հայտնաբերված էին Կիրովականի Դիմացի դամբարանից։ Սրանց հետ միասին նույն դամբարանից հայտնաբերված է նաև բրոնզե թռչունի արձանիկ, կախելու ունկով, մակերեսն ամբողջովին եռանկյուն ժանյակաձև կտրվածքով, պոչը լայն, աչքերը լավ արտահայտված, նման է ջրային թռչունի։ Գտնված է նաև բրոնզե ժանյակաձև կտրվածքներով բոժոժ, կախելու ունկով։ Երկուսի մեջ էլ քար կա, հնչեցնելու համար։ Նույն դամբարանից հայտնաբերված են նաև ծարիրե կոճակներ և ոսպաձև ուլունքներ, երկնագույն շաղախից ուլունքներ տարբեր ձևի, իսկ սերդոլիկե ուլունքները բազմաթիվ և բազմաձև են, կան շատ լավ հղկվածները։ Ըստ որում, կան նաև տասնյակից ավելի նշաձև սերդոլիկե ուլունքներ, որոնք առիթ են տվել ուսումնասիրողներին վիճելու նրանց ժամանակագրության շուրջը, որը վերջնականապես պարզված է արդեն և թվագրվում է մ. թ. ա. XIV դ. վերջով և XIII դ. սկզբով[35]։ Նման ուլունքներ հայտնաբերված են նաև Լճաշենից, Արթիկից, Գեղարոտի № 1 դամբարանից և այլ վայրերից։ Ինչպես վերևում տեսանք, այս դամբարանի ոսկե և արծաթե իրերը կապվում են Լճաշենի (XIV—XII դդ. մ. թ. ա.), Արթիկի (XII—XI դդ. մ. թ. ա) և Տոլորսի (XII—XI դդ. մ. թ. ա.) նյութերին։

Հետևաբար Կիրովականի Դիմաց թաղամասի իրերը կարող են պատկանել ուշ բրոնզի ժամանակաշրջանին և թվագրվել մ. թ. ա. XIII—XII դարերով։

Հաջորդը, 1948 թ. շինարարական աշխատանքների ժամանակ բացված Կիրովականի միջին բրոնզեդարյան հարուստ դամբաբանաբլուրն է։ Այստեղ բազմաթիվ բրոնզե զենքերի, գործիքների և հարուստ խեցեղենի կողքին հայտնաբերվել են նաև 4 արծաթե ամաններ և մեկ ոսկե թաս, երեք զույգ առյուծների բարձրադիր քանդակներով։ Այս դամբարանն իր թանկարժեք իրերով և դրանց կատարման ոճով կարելի է դնել Թրիալեթիի հարուստ դամբարանների կողքին։ Ի դեպ, Թրիալեթին գտնվում էր պատմական Գուգարք նահանգում, կազմելով նրա 5-րդ գավառը, կոչվում էր «Երկիրն Թռեղեաց կամ Ծաղկայ»[56], ուստի սերտորեն առնչվում է մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող շրջաններին և պատահական չէ վերոհիշյալ դամբարանի նյութերի հետ նրա սերտ նմանությունը։ Այստեղ մենք անդրադարձել ենք միայն ոսկե ու արծաթե երեսապատման թիթեղներին և երկու ոսկե ուլունքներին։ Դամբարանն ուսումնասիրել է Բ. Բ. Պիոտրովսկին[37], այն թվագրելով 2-րդ հազարամյակի կեսով։ Կիրովականի նյութերի ուսումնասիրությանը անդրադարձել է նաև Հ. Ա. Մարտիրոսյանը և ժամանակագրության վերաբերյալ հայտնել նույն կարծիքը[38]։

Ուզունլարի ոսկե մեդալիոնը գտնվել է պատահաբար, դպրոցի հիմքը փորելիս, ոսկե և արծաթե թիթեղների, բրոնզե ոռմբաձև կտրվածքով դաշույնի.

---

35 А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 91։
36 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 54։
37 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, էջ 46—47։
38 А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 64—66։



Ил. I

Ил. II

քարե ափսեի հետ միասին։ Կուֆտինը այն թվագրում է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսով։

Ինչ վերաբերվում է Կիրովականի Դիմաց թաղից հայտնաբերված ոսկե մատանուն, այն ամենայն հավանականությամբ պետք է պատկանի մ. թ. ա. VII—VI դարերին, կապվելով Բեշտաշենի VI դարի նյութերի հետ։ Ուրիշ իրերի հետ չզուգորդվելու հանգամանքը դժվարացնում է նրա թվագրումը։

Ինչպես տեսանք, մեր նկարագրած իրերը թվագրվում են մ. թ. ա. XV—XII դարերով։ Սակայն այս զարդատեսակները բնորոշ լինելով իրենց ժամանակշրջանի համար, չեն պարփակվում այդ շրջանակներով, նրանք հանդիպում են նաև ուշ ժամանակաշրջաններում (ինչպես վերևում տեսանք), և հաճախ ավելի կատարելագործված ձևերով։

Այսպիսով, Հայաստանում ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում, ոսկերչական արվեստում կիրառվում էր պատրաստման բազմաթիվ եղանակներ ու ձևեր, որոնք չէին զիջում իր ժամանակի Հին Արևելքի պետությունների ոսկերչական ձևերին։ Մեր տրամադրության տակ եղած անչափ սահմանափակ նյութերը հնարավորություն են տալիս ծանոթանալու պատրաստման միայն 8 եղանակների հետ, իսկ ընդհանրապես, թե դրանք որքան են եղել, ցույց կտան շատ ավելի լայն նյութ ընդգրկող և խորը ուսումնասիրությունները։